2003, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (164)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ

## ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՄԵԾ ՈՒ ՍՔԱՆՉԵԼԻ

*«Մի՛ վախեցեք, որովհետեւ ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որը ամբողջ ժողովրդինը կլինի. որովհետեւ այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է»:*

(Ղուկ. Բ 10-11)

Արեւելք: Տարբեր կրոնների, վարդապետությունների, ծեսերի մարդկային բարոյա-հոգեբանական մի աշխարհ, ուր ճշմարիտ լույսի շողերը բեկվում, կայծկլ-



տում ու մարում էին խավարի անթափանց երակներում, ուր կարեկցանքն ու գութը, ապառաժներում ծվարած անթեւ հավքի պես, անտեր ու անզոր էին, ուր կարոտյալներին ուղղված սիրո արտահայտությունը բաքոսների՝ գինու դատարկված անոթներից բուրող տտմահոտ էր սոսկ եւ ուրիշ ոչինչ:

Արուսյակից խաբված ու արուսյակով հմայված մարդը մոռացել էր իր արարչատես պատկերի մասին ու մթան տուտն առած՝ աներկյուղ գնում էր խավարամած, խավարածին ճանապարհներով՝ կորցրած ճշմարիտ Աստծո պարգեւած շնորհները, Նրա մեծ ու անպարփակ սերը:

Մինչքրիստոնեական աշխարհի կրոնական, բարոյական ու իմացական նկարագիրը նման էր օվկիանոսում անղեկ նավի անհեռանկար ու վտանգավոր ընթացքին: Սեփական կամքին ապավինած մարդկության մի մասը տակառի ջրում արտացոլված իր պատկերով էր հրճվում, իսկ մյուսը՝ հոգեւոր անդունդի խորշերում փրկության ելքեր որոնում, որոնում Նրան, Ով պիտի գար ու մի օր ջախջախեր օձի գլուխը: Եվ թեպետ մեղավոր մարդը հեռացել էր իր Արարչից, ընկել մոռացության նիրհի մեջ, սակայն ամենագութ ու ամենատես Անճառելին չէր լքել Իր բանական հոտին եւ նրան փրկելու իր ծրագիրն ուներ՝ Խորհուրդ՝ մեծ ու սքանչելի, եւ սպասում էր այն իրականացնելու ժամանակին, սպասում էր մարդու՝ իր փրկությանը ինքնակամ պատրաստ լինելու ժամանակին եւ այն գիտակցությանը, որ Աստծո բացակայությամբ ապրելը ոչ թե կյանք է, այլ՝ մահ, մահ՝ հոգեւոր ու հավիտենական: Մեղքի պատճառով դրախտից արտաքսված մարդը ճաշակեց չարի ու բարու, գիտության ծառի պտղից, սակայն ոչ՝ կենաց ծառի եւ զրկվեց հավիտենական կյանքից:

Հազարամյակներ շարունակ Սուրբ Հոգին ընտրյալների միջոցով մարդկությանն ակնարկում էր Աստծո սպասվելիք ծրագրի, այն է՝ մարդեղացած Որդու հայտնության, Նրա ծննդյան, երկրի վրա ապրած կյանքի, ուսմունքի, հրաշքների, չարչարանքների, մահվան մասին (Միք. Ե 2, Եսայի ԺԱ 1, Թ 1-2, Զ 9-10, ԼԵ 5-6, Սաղմ. ՀԱ 10-15, Երեմ. ԼԱ 15, Օսեե ԺԱ 1, Մաղաք. Գ 1...):

**«... Տերն Ինքը ձեզ նշան է տալու: Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, եւ Նրա անունը պետք է լինի Էմմանուել»** (Եսայի, Է 14), որ նշանակում է թե՝ «Աստված մեզ հետ է»:

Եվ ահա հասավ ժամանակը: Երկնքում անսովոր պայծառությամբ փայլատակող աստղը մարդուն ազդարարեց Բեթղեհեմյան մսուրի մեջ ծնված Մանկան՝ Աստծո Որդու մասին: Հիրավի՝ մեծ ու սքանչելի Խորհուրդ, դեռեւս երբեւէ չտեսնված զարմանահրաշ երեւույթ:

«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդուն տվեց» (Հովհ. Գ 16) նրան: Տիեզերքի արարիչը աստվածային Իր բարձունքից իջավ աշխարհ, ընդունեց Իր իսկ ստեղծած արարածի կերպարը, մարդեղացավ, կրեց երկրային կյանքում մարդուն բնորոշ հույզն ու ապրումը, դարձավ աղքատ ու կարոտյալ, հեզ ու խոնարհ, ճաշակեց ցավ ու դառնություն, տարավ նվաստացում ու չարչարանքներ, խաչ ելավ, որպեսզի Իր կյանքով, Իր խաչի ճանապարհով փրկի մարդուն հավիտենական մահից:

*Շարունակությունը էջ 2*

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Վարդապետական թեզերի պաշտպանություն



Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Տ. Շահե արք. Աճեմյանի նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի երկու միաբան հայրերի վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետի աստիճանի արժանացան Տ. Արմաշ աբղ. Նալբանդյանը եւ Տ. Եղիշե աբղ. Ավետիսյանը:

Հայր Արմաշի ուսումնասիրության թեման էր «Ակնարկ Սբ. Գրիգոր Լուսավորչին եւ Աթանասին վերաբերող հայերեն Պատարագների առ այսօր եղած հետազոտությունների մասին», իսկ հայր Եղիշեինը՝ «Աբասի որդի Գրիգոր վրդ. Սանահնեցու «Գիրք Պատճառացը»:

Դեկտեմբերի 23-ին Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանների տվչության արարողություն՝ ձեռամբ Տ. Ներսես արք. Պոզապալյանի: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետներին տրվեցին օձագլուխ գավազաններ՝ իբրեւ վարդապետական աստիճանի եւ իմաստության խորհրդանիշ:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վարդապետներին՝ Ներսես սրբազանի ուղեկցությամբ: Իր օրհնությունը տալով նորընծաներին՝ Վեհափառ Հայրապետը նրանց շնորհեց լանջախաչեր:

## Ուխտի Պատարագ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Դեկտեմբերի 21-ին, Մայր տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական արարողությունների շրջանակում, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին էին եկել մի խումբ հնդկաստանաբնակ հայեր՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի:

*«Հոգեկան մեծ ուրախությամբ Սբ. Էջմիածին ենք եկել հեռավոր Հնդկաստանից, պատմական հնդկահայոց գաղութից, եւ հպարտությամբ ուզում ենք ասել, որ Ս. Նազարեթ եկեղեցին ամենահին քրիստոնեական կառույցն է Կալկաթայում առկա այլ եկեղեցիներից: Այսօր այն նույնպես կանգուն է, կանգուն է, որովհետեւ իր հայացքը միշտ ուղղել է դեպի Ս. Էջմիածին ու սնվել նրանով: Քանզի Հայ Առաքելական եկեղեցին այն խաղաղ նավահանգիստն է, ուր կարող է հայ հավատացյալն իր հոգու հանգիստն առնել՝ որտեղ էլ, որ ապրելիս լինի: Եվ ահա այդ հավատքով է, որ այսօր եկել ենք մեկ անգամ եւս մեր հավատքի ուխտը նորոգելու, հաղորդվելու մեր Տիրոջ մարմնի ու արյան հետ, Ս. Էջմիածնի Իջման Ս. Խորանի առջեւ ծունկի գալու եւ աղոթելու»,-* ուխտի Սբ. Պատարագի իր քարոզում նշեց հայր սուրբը:

Սբ. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Բայբուրդյանը, ծխական խորհրդի ատենապետ Սոնիա Ջոնը եւ հայ համայնքի անդամներ:

Սրբազան արարողությունից հետո ուխտավորներին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

## Մայր տաճար բերվեց Սբ. Գրիգոր Լուսավորչի Աջը

Ավարտին մոտեցավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական տարին:

Հիշարժան հոբելյանի առիթով, կիրակի՝ դեկտեմբերի 28-ին, Վեհարանից հանդիսավոր թափորով Մայր տաճար բերվեց հայոց հավատքի հայր Սբ. Գրիգոր Լուսավորչի Աջը՝ հավատավոր ժողովրդի երկրպագության եւ օրհնության համար:

Մայր տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սբ. Պատարագ: Պատարագի ընթացքում հավատացյալ ժողովրդին առիթ ընձեռվեց մոտենալու հայոց մեծագույն սրբի մասունքն ամփոփող Աջին եւ շնորհազարդվել նրանից ճառագող զորությամբ:

Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հանդիսավոր արարողություն, որի ժամանակ Վեհափառ Հայրապետը Սբ. Աջով օրհնեց բարեպաշտ ժողովրդին:

*Տես՝ էջ 2*

# ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՄԵԾ ՈՒ ՍՔԱՆՉԵԼԻ

*Սկիզբը՝ էջ 1*

Ինքը՝ ճշմարտությունն ու ճանապարհը, Ինքը՝ Աստված, մարդեղացած աշխարհ եկավ, որպեսզի ընկած մարդուն բարձրացնի, առաջնորդի խավարից դեպի լույս զվարթը եւ աստվածացնի, անհույս դեգերումներից՝ դեպի առագաստն ապահով, մահից դեպի փառավոր հավիտենություն:

Ահա թե ինչու համայն քրիստոնյա աշխարհի համար Տիրոջ ծննդյան օրանշումը անձնական ու անանձնական բոլոր տոների տոնն է՝ Արքայատոնը:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, առաքելական ժամանակներից ի վեր, ամեն տարի հունվարի 6-ին խորհրդապաշտական ու սքանչելի արարողակարգով, ներքին խինդով ու ցնծությամբ կատարում է անսկիզբ ու անվախճան Աստծո՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնը:

Դարեր շարունակ հունվարի 5-ի երեկոյան մատուցվող Սուրբ Ծննդյան ճրագալույցի Պատարագը մեզ մտովի, հոգու ու հավատի աչքերով, սուրբ Էջմիածին Բեթղեհեմից տեղափոխում է հեռավոր այն օրերի Բեթղեհեմը, ուր գիշերապահ հովիվների հետ դառնում ենք ականատեսը Տիրոջ փառքի, նրանց հետ ունկնդրում մարդկության Բարի Հովվի ծնունդն ազդարարող հրեշտակի քաղցրալուր ավետիսն ու երկնային զորքի օրհներգությունը, վայելում երկնակամարում ճառագող պայծառ Աստղի շողարձակումն ու մոգերի՝ աշխարհակալ երկրային երեք թագավորների հետ մեր խոնարհումը բերում խանձարուրում փաթաթված Երկնային մեծ ու ահեղ Թագավորին, որի իշխանությունն անսկիզբ է ու անվախճան, որի կամքը հիմն է անվերապահ արդարության ու ճշմարտության:



Եվ վերջապես՝ մոգերի հետ, կենդանի Աստծուն մեր մեջ առած, առհավետ փոխում մեր կյանքի ուղին:

Իսկ հունվարի 6-ին մատուցվող Ծննդյան Պատարագին առնում ենք ավետումը Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ոչ միայն Ծննդյան, այլեւ Նրա Մկրտության, մեր մեջ Նրա՝ որպես Աստված հայտնության, ճաշակում Տիրոջ մարմինն ու արյունը եւ դառնում Նրա հավիտենական կյանքի մի մասնիկը:

Խորհուրդ՝ մեծ ու սքանչելի, սուրբ ու սրբազան պահ.
**-Քրիստոս ծնաւ ու յայտնեցաւ.**
Եվ սուրբ ու սրբությամբ հնչող արձագանք.
**-Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:**

## ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

# (ՃԱՌ) ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԾՈ ԾՆՆԴՅԱՆ

Սուրբ եւ զուգական Երրորդությունն ունի երեք անձ, մի աստվածություն, մի էականություն, մի իսկություն, մի ինքնակամություն: Մի է (Նրա) թագավորությունը, մի է արքայությունը, մի է տերությունը, մի է իշխանությունը, մի է փառավորությունը, մի է բնությունը, մի է հավասարությունը, մի է սրբությունը, մի է կամքը, մի է խորհուրդը, մի է փառքը, մի է պատիվը, մի հույս, մի սեր, մի հավատ: Մեծ, հզոր, կարող է եւ ամեն ինչից վեր, անեղ, անանց, անսկիզբ, անվախճան, անվերջ, անհաս, անտես, անքնին, ոչնչի կարիքը չունի եւ ոչինչ չի ցանկանում: Ամենահայր է, ամենասեր, ամենագութ, ամենախնամ, ամենալուր, ամենապարգեւ, ամենահաս, ամենատես, ամենագետ, ամենափրկիչ, ամենակեցույց: Ով աստվածային իշխանությամբ դարմանում է բոլոր արարածներին՝ երկնավորներին եւ երկրավորներին, երեւացողներին եւ աներեւույթներին, շեներում եւ անշեն վայրերում՝ երեւացող եւ աներեւույթ, երկնավոր եւ երկրավոր բոլոր արարածներից Նրան փա՜ռք հավիտյանս:

Միածին Բանը Հոր կամքով եկավ երկիր եւ մարմնացավ սուրբ Կույս Մարիամից, չարչարվեց, թաղվեց, հարություն առավ երրորդ օրը, նստեց Հոր աջ կողմը եւ դարձյալ պիտի գա՝ դատելու կենդանի եղողներին եւ մեռյալներին: Էությամբ անմայրն ու տեսչությամբ անհայրը եկավ փրկելու արարածներին: Միայն Աստծուն հնարավոր չէ չարչարվել, հնարավոր չէր մեռնելը եւս. արդ, է Աստվածն եկավ եւ դարձավ մարդ, մեռավ եւ փրկեց արարածներին: Արդ, ուրիշ մեկն արարիչ, փրկիչ եւ կեցուցիչ չեղավ Նրա պես եւ չի՛ էլ լինելու, այլ միայն՝ Մինը, Միածինը, Կույսից ծնված Աստվածը, որ դարձավ մարդ: Քանզի մարդկանցից շատերն են աստվածածանոթ, աստվածատես, աստվածախոս, սակայն ըստ բնության կոչվում են մարդիկ եւ ո՛չ Աստված: Ոմանք մարմնով ելան երկինք, սակայն եւ այնտեղ ըստ բնության մարդիկ կամ հրեշտակներ են, սակայն ո՛չ թե Աստված: Նույն օրինակով եւ Բանն Աստված եկավ երկիր, դարձավ մարդ եւ մեռավ իբրեւ մարդ, սակայն ըստ էության կոչվում է Աստված եւ ո՛չ՝ աստվածացած մարդ: Մարդ՝ երկնքում եւ երկրում. նույն Ինքը՝ միացած, միավորված մարմնով եւ աստվածությամբ, Հոր կամքով ծնվեց սուրբ Կույսից իբրեւ խոսք եւ միտք, Հոր կամքով ի սկզբանե ստեղծեց ամեն ինչ եւ վախճանին հայտնվեց մարդկանց՝ իբրեւ տեր եւ տնուչ երկնքում եւ երկրում: Նախքան հավիտյանները եղողը վախճանին իջավ երկիր՝ մարդկանց կյանքի եւ փրկության համար: Աստծո միջնորդ եւ աշխարհի երաշխավոր. Հոր պատարագ եւ մարդկանց փրկություն. աշխարհի զատիկ եւ տիեզերքի տոն. մարդկանց հովիվ եւ պահապան թշնամիներից. կյանքի տվիչ եւ հարության ավետավոր. կյանքի հաջողիչ եւ արքայության պատճառ. աշխարհի խաղաղարար եւ խավարածների լուսատու. կյանքի տվիչ եւ պարգեւներ բաշխող. արդարների փառք եւ մեղավորների փրկանք. ողջերի կյանք եւ մեռածների հույս. Նրան փառք հավիտյանս:

*Թարգմանությունը Ա. Ստամբոլցյանի*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշան՝ Գոհար Գասպարյանին եւ Հակոբ Հակոբյանին

Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Վեհարանի հանդիսությունների սրահում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ հայ արվեստի մշակներ Գոհար Գասպարյանին եւ Հակոբ Հակոբյանին Հայ եկեղեցու պատվո բարձր «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրելու առթիվ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Ներսես արք. Պոզապալյանը՝ մեծապես արժեւորելով նրանց հայրենանվեր գործունեությունը: Գնահատանքի խոսքեր ասացին նաեւ Հայաստանի ժող. արտիստ Տիգրան Լեւոնյանը եւ արվեստաբան Շահեն Խաչատրյանը՝ անդրադառնալով այս երկու նվիրյալների բեղուն ստեղծագործական ուղուն եւ հայ երգարվեստին ու գեղանկարչությանը բերած մեծ ավանդին:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին եւ Նորին Սրբության ձեռամբ տիկին Գ. Գասպարյանին եւ տիար Հ. Հակոբյանին հանձնվեցին հայրապետական սրբատառ կոնդակները:

*«Ուրախ ենք հաստատել, որ Ձեր երգացանկում հատուկ տեղ են գրավել հայ հոգեւոր երաժշտության գանձերը, որոնք Դուք սովորել եք դեռեւս Ձեր ծննդավայրում՝ հայ կյանքի ավանդություններով հարուստ Եգիպտոսում՝ մանուկ հասակից երգելով եկեղեցու դպրաց դասում: Ձեր երգը հնչել է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպես աղոթք ու փառաբանություն առ Բարձրյալն Աստված, Ով Իր առատ օրհնությամբ պարգեւել է Ձեզ երգչուհու տաղանդն ու շնորհները»*,- նշված է հանրահռչակ հայ երգչուհուն ուղղված հայրապետական կոնդակում:

*«Գեղանկարչության բարձունքները նվաճած Ձեր կտավներն անուն ու ճանաչում են բերում Ձեզ եւ հռչակ հավելում հարուստ ու հինավուրց մշակույթ ունեցող մեր ժողովրդին, որի արժանավոր եւ շնորհաշատ զավակն եք Դուք՝ Ձեր հոգում միշտ կրելով քրիստոնյա մեր ժողովրդի արժեքներն ու հայրենի ժառանգությունը: Տասնամյակներ շարունակ նշանավոր տարբեր քաղաքների հանրահայտ թանգարաններում ցուցադրվող Ձեր նկարները ծառայում են հոգեւորի զորացմանը՝ մարդկանց սրտերում ու բարու արգասավորմանը՝ աշխարհում»*,- ասվում է 80-ամյակի առիթով բազմավաստակ նկարչին շնորհված հայրապետական կոնդակում:

Պարգեւատրելով երկու նվիրյալներին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով՝ Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բաշխեց ներկաներին:

*«Հանդիսությունը, որքան որ նպատակ է հետապնդում գնահատանքի արժանացնելու այն ծառայությունը, որ իրենք մատուցել են մեր ժողովրդին մշակույթի ասպարեզում, նույնքան նաեւ արտահայտելու մեր՝ հոգեւորականներիս, երախտագետ զգացումները, որ դժվարին տարիներին, երբ արգելված էր հոգեւոր քարոզչությունը մեր կյանքում, նրանք հասարակական կյանքից ներս ապրեցրին, զորացում, զարգացում պարգեւեցին ու հնչեցրեցին հոգեւոր մեր արժեքները»*,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Իրենց երախտագիտության խոսքը Վեհափառ Հայրապետին ուղղեցին Գոհար Գասպարյանն ու Հակոբ Հակոբյանը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ՀՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար տիկ. Թամարա Պողոսյանը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը եւ մշակույթի անվանի գործիչներ:

Հանդիսության գեղարվեստական մասում հանդես եկան Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաները:



# Սարկավագական եւ դպրական ձեռնադրություն Հայ Առաքելական Եկեղեցում

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Սբ. Ստեփանոս նախավկայի եւ առաջին մարտիրոսի տոնը, որի առիթով սարկավագի աստիճան ստացան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ու Սեւանի Վազգենյան դպրանոցի 17 սան:

Տոնի առիթով Սբ. Էջմիածնի Մայր տաճարում՝ Սբ. Ստեփանոս խորանի առջեւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սբ. Պատարագ: Պատարագիչն էր Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը, որը ձեռնադրությունից հետո իր քարոզի մեջ հորդորեց նորընծա սարկավագներին որպես կյանքի ուղենիշ ունենալ Ս. Ստեփանոսի աներեր հավատը, անսակարկ նվիրումն ու զոհողության ոգին:

Սբ. Պատարագից հետո Վեհարանում նորընծա սարկավագներին իր օրհնությունը եւ հայրական պատգամը տվեց նաեւ Ամենայն Հայոց Հայրապետը:

Իսկ դեկտեմբերի 25-ին Սեւանի Ս. Առաքելոց եկեղեցում երեկոյան ժամերգությունից հետո, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, դպրական աստիճան ստացան Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի 16 սան:

Հայ Առաքելական եկեղեցու առաջին չորս աստիճանները՝ դռնապանությունը, ընթերցողությունը, երդմնեցուցչությունը եւ ջահընկալությունը, մեկ բառով կոչվում են դպրություն: Դպիրներն իրավունք ունեն եկեղեցական արարողությունների ժամանակ շապիկ հագնելու, շարականներ եւ սաղմոսներ երգելու, հետեւելու եկեղեցու կարգ ու կանոնին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Գրիգոր Նարեկացու «ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԻ» նոր մեկնությունը



*Սկիզբը՝ թիվ 22, 23*

**Գ մաս**

Թեեւ տաղի հենց երկրորդ տողում ասված է՝ **«Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց»**, սակայն բանաստեղծը նկարագրում է այն պահը, երբ սայլն արդեն չէր շարժվում եւ անշարժ կանգնած էր Մասիսի բարձունքին.

*Ածեալ են, ածեալ,*
*Զսայլիկն ածեալ են, կացուցեալ.*
*Ի Մասեաց յաջ կողմանէն*
*Զսայլիկն ածեալ են, կացուցեալ.*
*Եւ ահա չշարժէր սայլիկն այն,*
*Եւ ահա չխաղայր անիւն այն:*

Կնշանակի սայլն անցյալում մի ժամանակ է իջնելիս եղել Մասիսի գագաթից եւ այժմ անշարժ կանգնած է լեռան բարձունքին: Տաղի մեկնիչից սկսած մինչեւ ժամանակակից մեկնաբանները սայլի վերստին շարժվելը կապում են Հովհաննես Մկրտչի հետ, որն իբրեւ միջնորդ Հին եւ Նոր Կտակարանների միջեւ՝ ճանապարհ է հարթում Քրիստոսի քարոզության համար:

Մ. Աբեղյանն այս առթիվ գրում է. **«(Ճորտը) ահեղագոչ ձայն է տալիս եզնամոլին, կանչում է աքռակին,- բայց եւ այնպես սայլը Մասիսի աջ կողմում անշարժ կանգնած է մնում: Սակայն երբ լծում են եզները.... այդ ժամանակ ահա՛ տեղից շարժվում է սայլը»** (Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ, էջ 625): Այնպիսի տպավորություն է ստացվում, կարծես ճորտը, որի տակ հասկացվում է Հովհաննես Մկրտիչը, գոռում-գոչում է՝ առանց սայլին եզները լծելու, մինչդեռ Նարեկացու տաղից նման հետեւության չի կարելի գալ:

Ճորտը, ինչպես ասվեց, հայ գեղջուկի շինական սայլորդի կերպարն է եւ ոչ մի կապ չի կարող ունենալ Նոր Կտակարանի Հովհաննես Մկրտիչ մարգարեի հետ ո՛չ իր արտաքին նկարագրով՝ հաստաբազուկ, լայնաթիկունք, ուռի պես դալարամեջք, որ համեմատելի չէ Պաղեստինի անապատում մորեխներով (մարախ) սնվող ճգնավորի հետ (Մատթ. Գ 4. **«Եւ կերակուր նորա էր մարախ եւ մեղր վայրենի»**, նույնը եւ Մարկ. Ա 6), ո՛չ էլ իբրեւ քարոզիչ-մարգարե, որին Հիսուս մեծ է համարում մարգարեից. **«.... մարգարէ՞. այո, ասեմ ձեզ, առաւել եւս քան զմարգարէ: Զի սա է վասն որոյ գրեալն է թէ, Ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ յարդարեսցէ զճանապարհ քո առաջի քո: Ամէն ասեմ ձեզ, Մեծ ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է, բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա»** (Ղուկ. Է 26-28):

Մի այլ տեղ Հիսուս հանդիմանում է հրեաներին՝ Հովհաննես Մկրտչի հետ անիրավ վարվելու համար. **«Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր եւ ծագէր, եւ դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա»** (Յովհ. Ե 35):

Հովհաննես Մկրտիչը՝ իբրեւ Քրիստոսի առջեւից ընթացող առաջընթաց Կարապետ, ճանաչված է Հայ եկեղեցու կողմից, ինչպես եւ հայ ժողովրդական բանահյուսության մեջ՝ որպես հզոր սուրբ՝ սկսած դեռեւս Սահակ Պարթեւի կանոնական սահմանադրությունից (426 թ.) եւ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» (5-րդ դ): Ավելին՝ Գրիգոր Լուսավորչի Վարդապետության համաձայն՝ Սինա լեռան վրա Մովսեսին Աստծո հանձնած սրբախորհուրդ շնորհները՝ քահանայությունը, թագավորությունը եւ մարգարեությունը, ավանդապահների ձեռքով սերնդեսերունդ փոխանցվելով, հասան Հովհաննես Մկրտչին, որն էլ իբրեւ ժառանգության ավանդապահ, այդ սուրբ շնորհները՝ քահանայությունը, օծությունը, մարգարեությունը եւ թագավորությունը տվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսին (Ագաթ. պարագր. 431-435, 468):

Ճիշտ է՝ Գրիգոր Նարեկացին «Մատյան ողբերգության» քերթվածում մի անգամ ավելի քան զուսպ է արտահայտվում նրա մասին՝ գրելով.

*Եւ ոչ դեւական կարապետային*
*անկատարագործ,*
*Ի երկուցն մի բաժանեալ խտրոց,*
*Հնոյն լրումն եւ նորոյս սկիզբն,*
*Ունայն ի հոգւոյ յապաշխարանն*
*հանդիսացեալ...*

(Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985, բան ԾԴ, Բ, էջ 297):

*Ոչ էլ դեւական անկատարագործ*
*կարապետի պես*
*(Որը երկուսի միջասահմանում իբրեւ*
*անջրպետ՝*
*Հնի լրումն ու սկիզբն էր նորի,*
*Ունայն, հոգեզուրկ,*
*ապաշխարության մի հրավիրակ...)*

(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության. Տաղեր, թարգմ. Վ. Գեւորգյանի, էջ 81):

Սակայն իր գանձում՝ «Քարոզ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ ի սուրբ Յովհաննէս Մկրտիչն» (Մ. Մ. ձեռագիր թիվ 7785, թ. 241բ-242ա), բանաստեղծը նրան անվանում է *«Աւարտ եւ կէտ դադարման ըստուերին եւ ճշմարտութեան նորոյս ըսկիզբն եւ առաջնորդ»* եւ *«Եւ յառաջընթաց կարապետ գործողին զփրկութիւն տիեզերաց»*: Ուստի Նարեկացին հազիվ թե ճորտ անվաներ ճշմարտության առաջնորդին եւ առաջընթաց Կարապետին: Որպեսզի «ճորտ» մակդիրը չկպչի Հովհաննես Մկրտչին, «Յարութեան տաղի» մեկնիչը խմբագրում է Նարեկացուն՝

*«Եւ այն մանուկ* (փխ. ճորտ- Ա. Մ.)
*խարտիշագեղն՝*
*Այն Յովհաննէսն էր Մկրտիչն»:*

Կարծես թե դրանից բան է փոխվում: Եվ առհասարակ զարմանք է հարուցում Հովհաննես Մկրտչի հայտնվելը Մասիս լեռան վրա (վերեւում արդեն ցույց ենք տվել, որ Նարեկացու պատկերած ճորտ սայլորդը բնիկ հայ գեղջուկի կենդանի կերպարն է): Այնպես որ Մասիս լեռան վրա սայլի շարժումը որեւէ ձեւով չի կարող նույնացվել Հորդանան գետի առափնյա շրջանում Հովհաննես Մկրտչի քարոզության եւ մկրտության հետ: Դա տեղի ունեցավ ավելի ուշ՝ Իսրայելում, իսկ մինչ այդ սայլի ոսկե գահույքին բազմած Քրիստոս համբերությամբ սպասում է Հայաստանում՝ Մասիսի բարձունքին:

Սովորական ընթերցողը կարող է տարակուսել՝ ինչպես է, որ սայլին բազմած Արքայորդին՝ Քրիստոս, Ով Ավետարաններում մի ակնարկով սանձում է հողմը, առանց որեւէ ջանքի Տիբերական ծովում փրկում է նավաբեկյալ աշակերտներին (Մատթ. Ը 23-28, Մարկ. Դ 36-40, Ղուկ. Ը 22-25), այս դեպքում չի կարողանում շարժել տալ սայլը եւ համբերատար, անտարբեր նստած է սայլի մեջ եւ ոչինչ չի անում սայլը տեղից շարժելու համար: Այդ տարակուսանքը փարատում է Հովհաննու Ավետարանը:

Գալիլիայի Կանա քաղաքում, մի հարսանիքի ժամանակ, որին ներկա էր Հիսուս՝ մոր եւ աշակերտների հետ, խրախճանքի կեսին գինին վերջանում է: Եվ Հիսուսի մայրը դիմում է Որդուն. *«Սրանք էլ գինի չունեն»*, իսկ Հիսուս պատասխանում է մորը. *«Զի՞ կայ իմ եւ քո, կին դու, չեւ է հասեալ ժամանակ իմ»* (Յովհ. Բ 4). *«Ինձ ու քեզ ի՞նչ, ով կին, իմ ժամանակը դեռ չի հասել»* (1999 թ. Աստվածաշնչի նոր աշխարհաբար թարգմանությունն այստեղ ունի՝ *«Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել»*): Այնուհետեւ Հիսուս սպասավորներին լցնել է տալիս ջրով 6 քարե թակույկներ (գուռեր) եւ ջուրը դարձնում գինի: Այսպես սկսեց Հիսուս Իր հրաշքները Գալիլիայի Կանա քաղաքում եւ հայտնեց Իր փառքը, եւ աշակերտները հավատացին Նրան (Յովհ. Բ 11):

Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունն ավելի եւս օգնում է հասկանալու իմաստը



Հիսուսի խոսքերի՝ *«Իմ ժամանակը դեռ չի հասել»*: Այս առթիվ Վարդապետության մեջ կարդում ենք. *«Արդ՝ լռեալ ամս երեսուն զինքն ի յայտնելոյ, ի հասակ մարմնոյն զարգացեալ, ըստ բնութեան աճման մարմնոյն»*: Այսպես, մինչեւ երեսուն տարեկան հասակը Հիսուս լռում էր եւ ոչինչ չէր հայտնում Իր մասին: Մարմնավոր բնության համաձայն՝ զարգանում եւ հասունանում էր, մինչեւ որ հասնում է ժամանակը, եւ հայտնվում է ճկուն ու ճարպիկ ճորտը՝ լայնաթիկունք, հաստաբազուկ հայ գեղջուկը, եւ իր գոռում գոչյունով ստիպում է անշարժ զույգ եզներին՝ եզնամոլին առաջ շարժել սայլը, որը գիլ-գլոր Մասիսի աջ կողմից իջնելով՝ ճռնչալով գալիս մտնում է Երուսաղեմ. այստեղ էլ Հիսուս մկրտվում է Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում եւ հավաքելով աշակերտներին՝ սկսում Իր քարոզներն ու հրաշքները:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ ՕՁՆԵՑԻ
(717-728)

*Սկիզբը՝ էջ 3*



Հովհաննես Օձնեցու այս ուղեւորությամբ հայ քաղաքական եւ հոգեւոր շրջանները վերջնականապես խզեցին իրենց հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ եւ փորձեցին հարմարվել արաբական տիրապետությանը: Հայաստան ուղարկված զորքերի միջոցով բյուզանդացիները վտարվեցին արաբական մասից, իսկ վերակացուներն ու զինվորները, աճապարանքով թողնելով երկիրը, ստիպված եղան իրենց ունեցվածքի մի մասը թաղել հողում: Կրոնական հարցում Օձնեցին խստորեն հետապնդեց քաղկեդոնականությանը Հայաստանի արաբական մասում, որը բյուզանդացիների քաղաքական հաջողության շրջանում տեղ-տեղ արմատներ էր ձգել անգամ արաբներին ենթակա հայկական երկրամասերում: Հասկանալի է, որ բյուզանդական տիրապետության տակ գտնվող հայկական երկրամասերում հայ հոգեւորականությունն ու բնակչությունը նշանակալից չափով ստիպված էին հետեւել քաղկեդոնականությանը: Այնպես որ, հազիվ թե կարելի է համաձայնել Մ. Օրմանյանի հետ, թե բյուզանդական Հայաստանի հայությունը նույնպես գտնվել է Հայոց Առաքելական եկեղեցու, եթե ոչ ենթակայության, ապա ազդեցության ներքո: Այլ հարց է, որ Լեւոն Իսավրացին, լինելով պատկերամարտության ջատագով, քաղկեդոնականության մոլեռանդ պաշտպանությամբ հանդես չէր գալիս:

Այսուհանդերձ հայերի մեծ մասի հակաբյուզանդական դիրքորոշումը խիստ անհանգստացրեց բյուզանդական կայսերը, որը Վասիլ իշխանին հատուկ դեսպանությամբ ուղարկեց Հայաստան, որը նպատակ ուներ պարզելու, թե ինչու է նա այդ չար բանը կատարել՝ ի նկատի ունենալով հայերի մերձեցումը արաբներին: Դեսպանության գործունեության եւ բանակցությունների մասին ոչինչ հայտնի չէ: Հայտնի է միայն, որ Վասիլ իշխանը ծանր հիվանդացավ, որին բժիշկները ոչնչով չկարողացան օգնել, իսկ երբ Հայոց կաթողիկոսը նրան առժամանակ առողջացրեց, նա ընդունեց Հայ Առաքելական եկեղեցու դավանանքը եւ հաստատվելով Հռոմայրում՝ 15 տարի անցկացրեց ճգնավորությամբ՝ որպես Հայոց եկեղեցու հավատացյալ:

Ղեւոնդի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Օմարը քրիստոնեությունը քննադատող նամակ է ուղարկում բյուզանդական կայսր Լեւոն Իսավրացուն, իսկ վերջինս էլ նրան հերքողական պատասխան է գրում՝ պաշտպանելով քրիստոնեությունը եւ Սուրբ Գիրքը իսլամական վարդապետության հարձակումներից: Դժվար է ասել, թե որքանով էր կապված կայսեր պատասխանի հետ, այնուամենայնիվ խալիֆ Օմար Բ-ն վերջ տվեց քրիստոնյաների նկատմամբ մինչ այդ տեղ գտած բռնություններին: Մյուս կողմից բյուզանդական կայսեր պատկերամարտ ընթացքն ավելի շատ ուղղված էր քաղկեդոնականության դեմ, որի ծեսերի մեջ պատկերապաշտությունը կարեւոր տեղ էր զբաղեցնում, իսկ իսլամում բացարձակապես արգելված էր: Պատկերամարտությունը, որին ծնունդ էր տվել Հերապոլսի եպիսկոպոս Զենոնը, նրա ժամանակներում առանձին տարածում չէր գտել եւ միայն իսավրական ծագում ունեցող Լեւոն կայսրն էր վերցրել իր հովանավորության ներքո՝ կարգադրելով ոչնչացնել պատկերները եկեղեցիներում եւ հասարակական վայրերում: Պատկերապաշտության դեմ պայքարն ուժեղացավ կայսեր 724 թվականի հրովարտակի հրապարակումից հետո: Ոչնչացվում էին ոչ միայն սրբապատկերները, այլեւ հալածվում եւ աքսորվում էին սրբապատկերների պաշտպան հոգեւորականները: Պատկերամարտությունը, հասկանալի պատճառներով, հայերի մեջ առանձին ազդեցություն չունեցավ, քանի որ Հայոց եկեղեցին սրբապատկերների հարցում խիստ զգուշավոր էր, չնայած բացահայտ պատկերամարտ բնույթ չուներ:

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# Խադ եպիսկոպոսը՝ Ներսես Մեծի տեղապահ



## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թագավորական իշխանությունը ամրապնդելու եւ նախարարների կենտրոնախույս նկրտումները զսպելու նպատակով Արշակը սկսում է Արշակավան քաղաքի կառուցումը՝ Մասիս լեռան թիկունքում գտնվող Կոգովիտ գավառում: Ինչպես Մովսես Խորենացին է ասում, նա շինեց մի դաստակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի, եւ ով որ կարողանար այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա դատական օրենքը չէր գործի: Փավստոս Բուզանդը նույնպես պատմում է այդ մասին՝ նշելով, որ Արշակ թագավորն իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց, որ բոլոր կողմերում եւ ամեն տեղ մունետիկները հրապարակեն թագավորական հրամանը, ըստ որի. **«եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը մի ուրիշի որեւէ բանով վնասել է... կամ որեւէ մեկից երկյուղ ունի՝ թող գա այն տեղը (թագավորական դաստակերտը). նրա դեմ դատ ու պահանջ չի լինի: Եվ եթե մեկը մեկին մի բան պարտք է, եւ պարտատերը այդ տեղը գա պահանջելու՝ նրան առանց դատի ու արդարադատության բռնեն եւ դուրս հանեն»**: Արշակը թույլատրում է, որ Արշակավանում ազատորեն բնակվեն բոլոր ցանկացողները, նույնիսկ՝ օրինազանցները: Թագավորի ընդունած այսպիսի ծայրահեղ քայլը թելադրված էր ժողովրդի լայն խավերում նեցուկ գտնելու հանգամանքով:

Այդ ամենն առաջացնում է նախարարների դժգոհությունը, որովհետեւ նրանց կալվածքներից դեպի Արշակավան էին փախչում ավանդառուներն ու պարտապանները, ծառաներն ու շինականները: Մովսես Խորենացին հաղորդում է, որ նախարարները բազմիցս բողոքեցին, սակայն Արշակը չլսեց նրանց: Փավստոս Բուզանդը, գրելով Արշակավանի կառուցման մասին, հաղորդում է, որ այդ տեղն ավան ու քաղաք դարձավ, մեծացավ, բազմամարդացավ եւ ամբողջ հովիտը բռնեց:

Թագավորին շատ անգամ հանդիմանեց նաեւ Խադ եպիսկոպոսը:

Խադը Կարին գավառի Մարագ գյուղից էր, Ներսես կաթողիկոսի ձեռնասունը, սկզբնապես նրա մոտ սնված: Ինչպես Փավստոս Բուզանդն է գրում, Խադը հավատի մեջ առաջադեմ եղավ, բոլոր գործերում հավատարիմ գտնվեց, իր պաշտոնում առավելապես ցուցաբերեց սեր՝ Աստծու եկեղեցու հանդեպ: Ապա սուրբ Ներսեսը նրան հանձնեց աղքատների հոգաբարձության գործը: Այստեղ եւս նա աչքի ընկավ իբրեւ բարեխնամ տեսուչ: Այս բոլոր առաքինությունները նկատի ունենալով՝ Ներսես կաթողիկոսը Խադին ձեռնադրեց Բագրեւանդի եւ Արշարունյաց եպիսկոպոս:

Ինքը՝ Ներսես կաթողիկոսը, իր հովվական գործունեությունը շարունակում էր երկրի տարբեր շրջաններում, եւ ինչպես Փավստոս Բուզանդն է ասում, նա տարածում էր իր հոգածությունը Հայոց բոլոր գավառներում: Իսկ Սոփերքից իմանում ենք նաեւ, որ նա շրջում էր Վասպուրականի գավառներում եւ հաստատում եկեղեցու կարգերը: Ներսես կաթողիկոսն իր հոգեւոր գործունեությամբ հասել էր նաեւ Ուռհա-Եդեսիա քաղաքը:

Արշակ թագավորն Արշակավանում թագավորական ապարանք ու եկեղեցի կառուցելուց հետո, երբ Խադ եպիսկոպոսին ստիպեց գալ եւ Արշակավանի եկեղեցում սեղան կանգնեցնել, նա նախատեց եւ հանդիմանեց Արշակ թագավորին եւ նրա հետ եղած մեծամեծներին ու իշխաններին՝ ասելով. **«Բայց ես, տեղապահ եմ, ես իրավունք չունեմ որեւէ բան անել առանց իմ հոր, որ ինձ թողեց (տեղապահ)»**: Ինչպես Մովսես Խորենացին է նշում, Խադը մեծն Ներսեսին էր նման ամեն բանով, մանավանդ աղքատների խնամատարության գործում, որի շտեմարաններն էլ հենց աղբյուրի նման առատացան սքանչելի կերպով, ինչպես Եղիայի եւ Եղիսեի ժամանակ: Այսպես, թագավորին հանդիմանելու մեջ էլ նա ահավոր խիստ էր եւ աներկյուղ:

Արշակ թագավորը փորձեց նվերների եւ պաշտոնների միջոցով Խադ եպիսկոպոսին դարձնել իր կողմը: Ինչպես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն է գրում՝ հենվելով Մովսես Խորենացու հաղորդման վրա, թերեւս Արշակին համարձակություն տվողն այն պարագան էր, որ Խադը ձոխ հանդերձներ ու ձիեր շատ էր սիրում, որի պատճառով էլ նրան համապատասխանաբար պարսավում ու ծաղրում էին մանավանդ նրանք, որոնց նա հանդիմանում էր: Բնականաբար, իր այս թուլությունը գիտակցելով՝ Խադը հրաժարվում է շքեղ զգեստներից եւ հագնում մազեղեն եւ մինչեւ իր մահվան օրը շրջում միայն ավանակով: Ուստի Խադ եպիսկոպոսը Արշակ թագավորից ստացած ընծաները հենց նրա ներկայությամբ բաժանում է աղքատներին, բայց, ինչպես Փավստոս Բուզանդն է նշում. **«հանդիմանությունը չէր պակասեցնում մինչեւ այն աստիճան, որ թագավորը հրամայեց՝ բանակից նրան հալածել»**:

Պատմիչի վկայությամբ՝ այդ անհանգիստ ժամանակներում Խադ եպիսկոպոսը գնում խնամում էր աղքատներին, ինչպես պատվիրել էր սուրբ Ներսեսը՝ մինչ իր Հունաց Վաղես կայսեր մոտ գնալը: Խադ եպիսկոպոսի ձեռքով կատարվում էին շատ նշաններ ու սքանչելիքներ, հիվանդների բժշկություններ եւ էլի ուրիշ շատ զարմանալի բաներ: Օրինակ, երբ նա օգնում էր աղքատներին, եւ դատարկվում էին իր բոլոր կճուճներն ու ամանները, մառանի բոլոր կարասները, մյուս օրը գնում եւ տեսնում էր, որ դրանք, ասես Աստծո հրամանով, նորից լցվել են: Եվ այդպես միշտ:

Փավստոս Բուզանդը Խադի մասին պատմելիս նշում է, որ մի զարմանալի, անվանի եւ հռչակված անձ էր Հայաստանում. շրջում էր Հայոց բոլոր եկեղեցիներում, խրատում եւ ուսուցանում էր, ինչպես իր ուսուցիչ Ներսեսը: Մի անգամ երկու գող սուրբ Խադ եպիսկոպոսի եկեղեցու եզները գողացել տարել էին: Հաջորդ օրն այս գողերի աչքերը կուրացան, եւ նրանք առանց գիտակցելու՝ խարխափելով բոլոր եզները բերեցին Խադի դուռը: Ինքը՝ եպիսկոպոսը դուրս եկավ, նրանց տեսավ եւ գոհություն տվեց Աստծուն, Ով այդքան վերակացու եւ խնամող է հավատացողներին: Հետո Խադ եպիսկոպոսն աղոթքի կանգնեց, գողերի աչքերը բժշկեց, հրամայեց նրանց լողացնել ու կերակրել: Վերջում նրանց օրհնեց, տվեց այն եզները, որ նրանք գողացել էին եւ ճանապարհ դրեց:

Այս ամենը ցույց են տալիս, որ Խադ եպիսկոպոսն օժտված էր ներողամտության աստվածային շնորհով եւ կարող էր Արշակավանում կառուցված եկեղեցում սեղան կանգնեցնել: Սակայն դա տեղի չունեցավ, քանզի Խադը խիստ կարգապահ էր եւ որպես տեղապահ՝ իրավունք չվերապահեց իրեն այդ անել: Իսկ երբ Ներսես կաթողիկոսը վերադարձավ՝ իր հերթին եւս սկսեց հանդիմանել Արշակին՝ Արշակավանում այդքան մարդ ժողովելու համար, եւ խորհուրդ տվեց թագավորին՝ քակել այդ տեղը, որ շինվել է այդքան մեղքերով, անօրենությամբ, չարությամբ եւ հափշտակությամբ, եւ բոլորին ետ ուղարկել իրենց տեղերը, որտեղից եկել էին՝ վերադարձնելով նաեւ նրանց հասանելիք պարտքերը: Սակայն Արշակ թագավորը, Ներսես կաթողիկոսի խոսքին հակառակ, շարունակում է իր ծրագրած Արշակավանի կառուցումը, ինչից անհանգստացած կաթողիկոսը զգուշացնում է. **«Գիտցած լինես, ո՛վ թագավոր, որ այս (քո արածի) մասին է գուշակել Աստված մարգարեի բերանով, թե «վա՜յ նրան, որ տուն է շինում ոչ արդարությամբ եւ վերնահարկ է կառուցանում ոչ իրավունքով»... որովհետեւ ավերակ կդառնան եւ նրանց մեջ հավիտյան մարդ չի բնակի»**:

Փավստոս Բուզանդը եւ Մովսես Խորենացին տարբեր կերպ են ներկայացրել Արշակավանի կործանումը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ երանելի Ներսեսի բերանից ելած այն խոսքերից հետո հազիվ էր անցել երեք օր, որ Աստված Արշակավան գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց: Մարդկանց եւ անասունների վրա սկսեցին դուրս գալ վատորակ պալարներ, որ կոչվում է ժանտ:

*Շարունակությունը՝ էջ 8*

## ՇԵՆՈՒԴԱ Գ

# ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Սրբազան ավանդություն

*Սկիզբը՝ էջ 3*

Հապա ինչպե՞ս են մեզ հասել: Բացառությամբ Պողոս առաքյալի, ով տասնմեկ առաքյալներից մեկը չէր եւ չէր մասնակցում այն հանդիպումներին, որոնք Տերն ունեցավ Իր հարությունից հետո, տասնմեկ առաքյալները, ում հետ Տերն Իր հարությունից հետո անցկացրեց 40 օր, գրել են խիստ սակավ, եւ նրանց գրածը չի պարունակում քրիստոնեության ամբողջ վարդապետությունը: Միայն մեկ բացատրություն կա սրան. դա այն է, որ Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությունները մեզ հասել են Ավանդության, այսինքն՝ առաքյալների կողմից ավանդման միջոցով:

Եկեղեցին ապրել է այս վարդապետությունները՝ ըստ Տիրոջ խոսքի. **«Այն խոսքը, որ խոսեցի ձեզ հետ, հոգի է եւ կյանք»** (Հովհ. Զ 64): Առաքյալները հասկացան խոսքերի հոգին եւ փոխադրեցին այն կյանք, եւ այս խոսքերը մեզ հասան եկեղեցու կյանքում:

Հետեւաբար, կարող ենք ասել, որ Սրբազան Ավանդությունը եկեղեցու կյանքն է կամ կենդանի եկեղեցին: Առաքյալներն այս կյանքը, Տիրոջից իրենց սովորած եւ ընդունած ամեն ինչով հանդերձ, ավանդեցին եկեղեցու սրբերին: Սակայն նրանք չգրեցին դրանք Ավետարաններում կամ թղթերում, այլ թողեցին իբրեւ ապրող կիրառություններ եւ վարդապետություններ եկեղեցու կյանքում:

Այդ վարդապետությունների շարքում են եկեղեցական կանոնակարգությունը, ծեսերն ու խորհուրդները:

Արդյո՞ք կարծում եք, որ Լեռան քարոզը (Մատթ. Ե-Է) երեք տարվա ընթացքում Տիրոջ ունեցած միակ քարոզն է: Սա անհավատալի է: Տիրոջ խոսքերը չանհետացան, աշակերտները դրանք պահեցին իրենց սրտում, ականջներում եւ մտքում: Իրենց բարի սրտի գանձից, իրենց սուրբ հիշողությունից նրանք դուրս բերեցին Տիրոջ խոսքերն ու ավանդեցին եկեղեցուն «Ավանդություն» (Tradition) կամ «Առաքելական ավանդություն» (The Apostolic Entrustment) անվան տակ: Սուրբ Հոգին նրանց սովորեցրեց ամեն ինչ եւ հիշեցրեց այն ամենը, ինչ Տերն ասել էր՝ համաձայն Իր անսուտ խոստման (Հովհ. ԺԴ 26):

### Դ. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՑՎԱԾ Է ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:

Շատ են այն առաքյալները, որոնք չեն գրել թղթեր (նամակներ): Որտե՞ղ են նրանց վարդապետությունները: Որտե՞ղ է աստվածային ներշնչանքի արդյունքը նրանցում: Որտե՞ղ է Սուրբ Հոգու գործը, Ով խոսում է մարգարեների միջոցով: Հնարավոր չէ նաեւ, որ որոշ առաքյալներ սովորեցնում էին միայն այն, ինչ գրում էին: Հնարավոր չէ, օրինակ, որ Հակոբոս առաքյալի վարդապետությունը ներառեր միայն այդ մեկ թուղթը, ոչ էլ որ Հուդա առաքյալը սովորեցրած լիներ միայն մեկգլխանի մեկ թղթում բովանդակվածը: Իսկ ի՞նչ ասել մնացած այն տասնմեկ առաքյալների մասին, որոնց վարդապետություններից ոչ մի բառ մեզ չի հասել: Ի՞նչ են նրանք քարոզել: Ի՞նչ են նրանք թողել եկեղեցուն: Ամենայն հավանականությամբ այդ վարդապետությունները, կամ դրանց մի մասը մեզ հասել են Ավանդության միջոցով:

Առաքյալները մտնում էին ժողովարաններ՝ սովորեցնելու եւ հակառակորդներին ընդդիմաբանելու համար, սակայն սրանից ոչինչ մեզ չի հասել: Նրանք քարոզում էին Երուսաղեմում, Հուդայում եւ Սամարիայում, մինչեւ ամենքը հավատային, բայց նրանց քարոզությունից մեզ հասել է միայն մի փոքրիկ մաս: Պողոս առաքյալը Հռոմում մտավ մի տուն, ուր նա անցկացրեց երկու տարի՝ համարձակորեն եւ անխափան քարոզելով Աստծո արքայությունը եւ սովորեցնելով Տեր Հիսուս Քրիստոսի մասին (Գործք ԻԸ 30-32): Այդ քարոզությունից ոչինչ չի հասել մեզ: Ո՞ւր անհետացավ այն:



### Ե. ԱՆԿԱՍԿԱԾ, ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ: ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ԴՐԱՆՔ:

Արդյո՞ք տրամաբանական է ընդունել, թե Տիրոջ առաքյալները, Տիրոջ բոլոր վարդապետություններն ընդունելուց հետո, եկեղեցին թողեցին առանց նրա գործունեությունը կարգավորող կանոնների կամ օրենքների: Իհա՛րկե ոչ. սակայն նրանք չգրեցին դրանք իրենց թղթերում, քանի որ այսպիսի բաները հասարակության համար չեն, կամ որովհետեւ դրանք, միեւնույն է, բոլորին հայտնի պիտի դառնային գործառության միջոցով: Անտարակույս այդ կանոնները մեզ հասել են Սրբազան Ավանդության միջոցով:

*Շարունակությունը՝ էջ 7*

